# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ՀՐԱՉ ՆՈՐԻԿՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ՀՐԱՉ ՆՈՐԻԿԵԱՆ, ՈՐ Ի ՍԻԴՆԻ, ԱՒՍՏՐԱԼԻԱ

Աւստրալիայի հայոց թեմի բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիօզեանից սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք, որ Դուք երկար տարիներ անսակարկ ու նուիրեալ Ձեր ծառայութիւնն էք մատուցել եւ առ այսօր ամենայն բծախնդրութեամբ շարունակում էք Ձեր կարեւոր նպաստը բերել հեռաւոր Աւստրալիայում հաստատուած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, որ, շնորհիւ նաեւ Ձեզ, գործում է իր առաքելութեան մէջ՝ մեր ժողովրդի զաւակաց ի մի խմբելու եւ ի Տէր առաջնորդելու:

Արդարեւ, Ձեր կեանքի ութերորդ տասնամեակի այս հանգրուանին, որպէս երեսնամեայ գործունէութեան աւանդ ունեցող Սիդնիի եկեղեցւոյ վարչութեան բարեջան անդամ, Դուք արժանիօրէն վաստակել էք սէրն ու յարգանքը թեմակալ առաջնորդի եւ հաւատաւոր աւստրալահայոց:

Գնահատելով բազմամեայ նուիրեալ Ձեր ծառայութիւնը եւ ընդառաջելով թեմա-կալ Սրբազան Հօր խնդրանքին, Միածնաէջ Մայր Աթոռից յղում ենք Հայրապետա-կան Մեր սէրն ու օրհնութիւնը՝ շնորհելով Ձեզ

# Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

մեր Եկեղեցւոյ պատուոյ շքանշանը:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որպեսզի «Նորոգողն Տիեզերաց» ծառայա-սիրութեան Ձեր ոգով նորոգի ու արդիւնաւորի կեանքը ասպրալահայոց՝ ի մխիթա-րութիւն վաստակեալ Ձեր հոգու եւ ի շինութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Ամենախնամն Աստուած Ամենազօր Իր Աջի հանապազ օրհնութեամբ քաջ-առողջութիւն եւ խաղաղ ու անվրդով բազում տարիների կենաց արեւշատութիւն բաշխի Ձեզ:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ». ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս
ի 30 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 10